

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«22» «02» 2012թ.

գ. Գեղամասար

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի ղեկավար Գ. Բեգյանի 2011թ. կատարված աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ ավագանու անդամներ, հրավիրված անձիք Ձեզ են ներկայացնում 2011թ. իմ կողմից Գեղամասար համայնքի աշխատանքների կատարման մասին հաշվետվությունը, որում վեր է հանվում համայնքում առկա հիմնախնդիրները և դրանց ուղղությամբ գյուղապետարանի աշխատակիցների կողմից ձեռնարկված միջոցները, ինչպես խնդիրների լուծման, այնպես և բյուջեի սեփական եկամուտների կատարման գործում: Իրագեկում են, որ գյուղապետարանի աշխատակազմը ղեկավարվելով տեղական ինքնակառավարման մասին և համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքի հրահանգներով և ենթաօրենսդրական ակտերով, ինչպես նաև ուղեցույց ունենալով համայնքի սոցիալ – տնտեսական զարգացման քառամյա ծրագրով նախատեսված միջոցները մեր գործունեությունը նպատակաուղղել ենք դրանց իրականացման, համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ապահովման, օրենքով սահմանված ինձ և գյուղապետարանի աշխատակազմին վերապահված պատվերված և պարտադիր լիազորությունների կատարման հարցերին: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ որոշակիորեն բարելավել է համայնքի բնակչության սոցիալ կենցաղային պայմանները, համեմատորեն առաջընթաց է արձանագրվել բնակչության զբաղվածության ապահովման, հոգևոր – մշակութային պայմանների բավարարման, կրթության և դաստիարակության խնդիրների կարգավորման, երիտասարդության, ռազմա - հայրենասիրական, ոգու բարձրացման, ազատ ժամանակի արդյունավետ անցկացման ուղղություններում:

Համայնքում առկա են 430 ընտանիք, շուրջ 1180 բնակչությամբ, որնց մեծամասնությունը ներգաղթվածներ են և տարիների ընթացքում լիովին համակերպվել են տեղական պայմաններին և համեմատաբար քիչ են գյուղից մեկնողների թվակազմը:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց 1-12-րդ դասարաններով, որոնցում սովորում են 180 երեխաներ: Համայնքի բանկչության զգալի մասը ընդգրկված են գյուղատնտեսության ոլորտում և հիմնականում զբաղվում են դաշտավորությամբ և անասնապահությամբ: Ձգալի է նաև այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և մեղվաբուծությամբ զբաղվածները:

Համայնքի հողային հաշվեկշռում ընդգրկված են շուրջ 1500հա վարելահողեր, որոնց վրա 2011թ. կատարվել է 850հա աշնանացան և 570հա գարնանացան հացահատիկային ցանք, 80հա զբաղեցրել են բանջարաբուստանային կուլտուրաններով :

Գյուղում գործում է կապի բաժանմունք, բուժ ամբուլատորիա, միջնակարգ դպրոց, որոնց աշխատանքներում ընդգրկված են շուրջ 35 համայնքի բանկիչներ, 12 բանկիչ աշխատում են գյուղապետարանի աշխատակազմում, գյուղում տեղակայված զին. տեղամասում նույնպես աշխատում են որոշակի թվաքանակով համայնքի բանկիչներ: Չնայած բնակչության զբաղվածության որոշակի ապահովված լինելուն, դեռևս մեծ թիվ է կազմում մշտական

աշխատանք չունեցող երիտասարդությունը, որը և տեղիք է տալիս արտագնա աշխատանքի մեկնելուն և գյուղից տևական ժամանակով բացակայելուն:

Այդ առումով խիստ անհրաժեշտ է գյուղում որևէ ձեռնարկության ստեղծումը, որի ուղղությամբ խնդրվում է կառավարության և մարզպետարանի աջակցությունը:

Չնայած գյուղով անցնող, համեմատաբար բարվոք վիճակում գտնվող, հանրապետական նշանակության ճանապարհի, հարկ են համարում նշել որ դեռևս անբարեկարգ են գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհները, որնք ունեն բարելավման կարիք: անբարվոք վիճակում են գտնվում խմելու և ոռոգման ջրագծերը, բավարար նպատակով իրականացվում է փողոցների բարեկարգման, սանիտարական, մաքրման և աղբահեռացման աշխատանքները: Գյուղում չի գործում մանկապարտեզ և կենցաղի տուն: Դժվարություններ կան գյուղացիների կողմից աճեցված գյուղ մթերքների իրացման հարցերում:

Համայնքում դեռևս լուրջ դժվարություններ կան հողերի մշակման, դրանց արդյունավետության բարձրացման հարցերում, առկա գյուղատեխնիկական և սարքավորումները հնամաշ են և չեն հասցնում ժամանակին և որակով կատարել գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածքների մշակման աշխատանքները, զգալի է աճեցված բերքի կորուստը: Ուստի անհրաժեշտ է կառավարության ազգաբնակչությանը համայնքին արտոնյալ պայմաններով, նոր գյուղ տեխնիկա և սարքավորումը հատկացնելու հարցում:

2011թ. համայնքի առջև ծառացած խնդիրները քննարկվել են համայնքի ավագանու նիստերում: Տարվա ընթացքում կայացել է ավագանու 9 նիստ, որոնցում հիմնականում քննարկվել են համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման և բյուջեի եփական եկամուտների կատարմանը վերաբերվող հարցեր:

2011թ. բյուջեի եկամտային մասը կազմել է 17267.3հազ. դրամ, որից համահարթեցման դոտացիան 11891.0հազ. դրամ:

Սեփական եկամուտներից հողի հարկ է գանձվել 4858.5հազ. դրամ կամ կատարվել է 99.8%-ով, գույքահարկինը՝ 365.4հ/դ դիմաց հարկվել է 224.7հ/դ, կամ կատարվել է 61.5%-ով:

Հողի վարձավճարը նախատեսված 1480.0հ/դ դիմաց գանձվել է 464.7հ/դ կամ կատարվել է 31.4%: Ծախսային մասը նախատեսվել է 17339.8հ/դ, որից աշխատավարձ 8600.0հ/դ դիմաց վճարվել է 8253.9հ/դ կամ 95.9%:

Սոց վճարից՝ 2100.0հ/դ դիմաց հատկացվել է 1407.9հ/դ կամ կատարվել է 67.0%:

Նախորդ տարիների աշխատավարձի ապառք է վճարվել է 670.0հ/դ:

Տարվա ընթացքում նախատեսված 5085.3 հ/դ ֆինանսական օգնություն դիմաց, շուրջ 150 անապահով ընտանիքների հատկացվել է 5033.0հ/դ դրամական օգնություն:

Շուրջ 100.0հ/դ հատկացվել է նախակրթարանի դաստիարակների աշխատավարձ:

2011թ. համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 69 որոշումները և կարգադրությունները: Անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել բնակչության կողմից ներկայացված դիմում - բողոքների քննարկման և դրանց բավարարման ուղղությամբ:

Չարկ են համարում ներկայացնել համայնքում առկա և հրատապ լուծում պահանջվող ներքոհիշյալ հիմնահարցերը և խնդիրները, որոնք ընդգրկված են համայնքի սոցիալ – տնտեսական քառամյա ծրագրում և ներկայացվել են համապատասխան մարմիններին համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար, սակայն դրանք դեռևս լուծում չեն ստացել գյուղապետարանի ֆինանսական միջոցների անբավարարության և կառավարության կողմից բացակայության պատճառով:

Առկա հիմնախնդիրներ են՝

1.Գյուղի գազաֆիկացումը

2.Համյանքային կենտրոնը

3.Նոր խմելու ջրագծի անվկացումը

4.Դպրոցի մարզադահլիճի համար գույքի ձեռքբերում

Չարգելի համագյուղացիներ. հավաստիացնում են Ձեզ, որ ինչպես իմ, այնպես և գյուղապետարանի աշխատակազմի կողմից 2012թ. լուրջ ձեռնարկումներ կիրականացվեն համայնքում առկա հիմնախնդիրների լուծման, տարեկան բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ապահովման, համայնքի ավագանու որոշակի կատարման, գյուղապետարանի աշխատանքային կարգապահության ամրապնդման և բնակչության վստահության բարձրացման գործում:

Գեղամասար համայնքի ղեկավար՝

Գ. Բեգյան